

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ*

«Ծով կենցաղոյս հանապազ վիս ալեկոծէ... Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն»:

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

1982 թվականի հոկտեմբերին լրացավ Հայ Առաքելական Եկեղեցու ականավոր հոգևոր գործիչ՝ աստվածաբան, բանաստեղծ, մանկավարժ և հայրենասեր Սրբազնագույն Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի երանելի մահվան 75-ամյակը:

Երանաշնորհ Հայրապետ Մկրտիչ Ա-ի (ժողովուրդը նրան «Հայրիկ» էր անվանում) կյանքի ուղին հանդիսանում է քրիստոնեական պատգամներին հավատարիմ մնալու, Եկեղեցու հանդեպ նվիրված ծառայության, հայրենիքի ջերմ սիրո և վիթխարի աշխատասիրության մի վառ օրինակ:

«Հայոց Հայրիկ... ազատության և հարության հույս». այսպես էր գրում Խրիմյան Հայրիկի մասին 20-րդ դարի սկզբին Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցին (հետագայում Կ. Պոլսի պատրիարք):

«Խրիմյանի զարգացումն ու հմտությունը միակողմանի էր, լոկ հայերենով սահմանափակված, միջազգային և օտարազգի տարրերով ճոխացած չէր... վարչական հանճարը պակաս ըլլալու չափ քիչ էր, հեռատես և նախատես զգուշավորությունը յուր ասպարեզը չէր... Բայց ուներ բնածին ուշիմություն մը, որ իր ըմբռնելու և հիշելու և որոշելու կարողությունը կկազմեր, ուներ բնատուր ճարտարություն մը, որով ամեն պարագայե անվնաս դուրս ելլելու կերպը կգտներ. ուներ գրավիչ ոճ մը և ազդեցիկ խոսք մը, որով գիտեր սրտերու վրա տիրապետել, և ամենուն վրա ուներ անկեղծ և ուղիղ զգացում մը, որ ամեն թերություն կլրացներ... Ինքն գրիչն ու ստեղծիչն եղած է ազգասիրական և հայրենասիրական զգացմունքներու»[1]:

Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի գործունեությունը ծավալվում է 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ ուժեղանում է օսմանյան

* Թարգմանաբար հրատարակում ենք Խրիմյան Հայրիկի կյանքին և նրա եկեղեցական, կրթական ու հասարակական գործունեությանը նվիրված Ա. Ումնովի սույն շահեկան հոդվածը, որը լույս է տեսել Ռուս եկեղեցու պաշտոնաթերթ «Журнал московской патриархии» ամսագրի 1983 թ. 7—8 հաջորդական երկու համարներում: Որոշ հայ հեղինակների գրքերից, ինչպես նաև Խրիմյան Հայրիկի գործերից կատարված մեջբերումները թարգմանվել են ռուերենից՝ հոդվածում աղբյուրները լրիվ հիշատակված չլինելու պատճառով:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

[1] **Մ. արք. Օրմանյան,** Ազգապատում, Երուսաղեմ, 1927 թ., հատոր Բ, էջ 5334—5335:

դաժան լուծը, որի հետևանքով կոտորվում են հարյուր հազարավոր հայեր, իսկ կենդանի մնացածները թողնում իրենց հայրենիքը: Այդ ծանր օրերին Խրիմյան կաթողիկոսը բաժանում էր իր հարազատ ժողովրդի վիշտը, գործնապես օգնում էր մարդկանց, խրատում իր բարի հովվական խոսքով:

Մկրտիչ Խրիմյանը ծնվել է 1820 թվականի ապրիլի 4-ին Արևմտյան Հայաստանի հինավուրց Վան քաղաքում, բարեպաշտ և աշխատասեր գյուղացու ընտանիքում: Մինչև չափահաս դառնալը նա զբաղվում է ջուլհակությամբ և միաժամանակ մեծ եռանդով հաճախում տեղի վանական դպրոցը: Վաղ հասակից Մկրտիչ Խրիմյանը ցուցաբերում է արտակարգ ստեղծագործական ընդունակություններ: Նա առանձին սիրով զբաղվում է տարբեր գիտություններով, գրում է բանաստեղծություններ, խորապես ուսումնասիրում է աստվածաբանության հիմունքները: Նրա սիրած գրքերից էր երջանկահիշատակ կաթողիկոս Հակոբ Կոստանդնուպոլսեցու «Զէն հոգևոր» գիրքը:

19-րդ դարի 50-ական թվականների սկզբներին Մկրտիչ Խրիմյանը, արդեն հասունացած մարդ, տեղափոխվում է Օսմանյան պետության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս իր կրթությունը շարունակելու նպատակով: Այնտեղ, քաղաքի հայկական թաղամասերից մեկում նա ամբողջովին նվիրվում է ուսուցչական գործունեության: 1854 թվականին 34-ամյա վարժապետը ծանր կորուստ է կրում. հանկարծակի մահանում են նրա երիտասարդ կինը և փոքրիկ աղջիկը:

Ապավինելով Աստուծո ամենակալ կամքին և ցանկանալով ավելի մերձենալ մեծավ մասամբ բարեպաշտ հայ գյուղացիությանը՝ Խրիմյանը ուխտ է անում կուսակրոն հոգևորական դառնալու և ձեռնադրվում է աբեղա: Հետագա տարիներին, ամենօրյա եկեղեցական պաշտամունքների ժամանակ, որոնք տեղի էին ունենում Կոստանդնուպոլսի ծայրամասում գտնվող մի փոքրիկ մատուռում, հայր Մկրտիչը իր քարոզչական հազվագյուտ ընդունակությունների շնորհիվ գրավում է ոչ միայն քաղաքի աշխատավոր հայ բնակչության՝ բեռնակիրների, շրջիկ առևտրականների, արհեստավորների, այլև հայ մտավորականության լայն շրջանակների ուշադրությունը: Պոլսի թե՛ հարուստ առևտրական թաղամասերից և թե՛ արվարձաններից մեծ թվով հայեր գալիս էին լսելու Խրիմյանի կիրակնօրյա քարոզները, որոնք աչքի էին ընկնում բացառիկ պերճախոսությամբ:

Պատարագի ժամանակ նրա սրտառուչ ձայնը, որ Աստծուց ողորմություն էր խնդրում իր տառապող ազգակիցների համար, մինչև ոգու խորքը ցնցում և հուզում էր բոլոր ներկաներին:

Այդ տարիներին Խրիմյանը անձնատուր է լինում աղոթքի և պահեցողության, կատարելագործվում է Սուրբ Գրքի ընթերցման և մեկնաբանման մեջ և միաժամանակ եռանդով զբաղվում գրականությամբ և բանաստեղծությամբ:

Կոստանդնուպոլսի հայկական համայնքներում իր հոտի մասին հոգացող հովվի՝ Մկրտիչ Խրիմյանի համբավը գնալով մեծանում է:

1857 թվականին Կ. Պոլսի Հայոց պատրիարքի օրհնությամբ նա դառնում է Վանի շրջանի Վարագա վանքի վանահայրը, իսկ հետագայում ստանում է վարդապետական աստիճան: Որպես վանահայր, նա հիմնում է վանքին կից օրինակելի մի դպրոց, որտեղ այլ առարկաների թվում դասավանդվում էր նաև գյուղատնտեսություն: Վանական դպրոցում ուսուցվող գիտությունների դասընթացն ավարտած երիտասարդներին նա ուղարկում է արտասահման՝ շարունակելու իրենց կրթությունը, կազմակերպում է թանգարան, օրինակելի գրադարան և տպարան: 1857 թվականին նա Վարագա վանք է տեղափոխում Կոստանդնուպոլսում 1850 թ. իր իսկ կողմից հիմնված ամսագիրը, որն այն ժամանակ կրում էր «Արծիվ Բյուզանդիայի» անունը, իսկ հետագայում այն վերանվանվում է «Արծիվ Վասպուրականի»: Այդ հանդեսի հրատարակումը համարյա եզակի մի փորձ էր ստեղծելու ինքնուրույն հայկական մամուլ ոչ թե Կոստանդնուպոլսում, այլ Արևմտյան Հայաստանի կենտրոնում: «Արծիվ Վասպուրականի» ամսագիրը ուղարկվում էր ձրի բոլոր ցանկացողներին: Այն իր գոյությունը դադարեցրեց գլխավորապես թուրքական իշխանությունների ճնշման հետևանքով:

Շուտով Մկրտիչ Խրիմյանը եպիսկոպոս է ձեռնադրվում և նշանակվում առաջնորդ Մուշ քաղաքում, որի շրջակայքում էր գտնվում Սուրբ Կարապետ վանքը:

Այս վանքը միջնադարում հանդիսանում էր Տարոն գավառի հայ դպրության և մշակույթի կենտրոն: Սուրբ Կարապետ վանքի խուցերից էր, որ 17-րդ դարում տարածվում էին վանքի վանահայր հոգեշնորհ Հովնան վարդապետ Խութեցու պատգամները, որոնցով կոչ էր արվում ժողովրդին ազատագրական պայքարի դուրս գալ բռնակալության դեմ:

1862 թվականից մինչև 1869 թվականը, յոթ տարի, Մկրտիչ Խրիմյանը եղել է Մշո առաջնորդ: Նա շատ ուժ և եռանդ է նվիրել իր թեմի հոգևորականների շրջանում աստվածաբանական և հոգևոր-բարոյական կրթության տարածման գործին: Մկրտիչ Խրիմյա-

նը չէր կարող չտեսնել, որ հայ քահանայից դասը բավարար չափով կրթություն չուներ, քանի որ նրա մտավոր պատրաստությունը սուկերեսային բնույթ էր կրում: Հայ վանականները և քահանաները հաճախ երկրով մեկ թափառում էին ինչպես պանդուխտներ: Քահանաները իրենց ծուխերում իրենց գոյությունը պահպանում էին հիմնականում այն վարձատրության շնորհիվ, որ ստանում էին ծիսակատարությունների դիմաց: Խրիմյանի հոգատարության շնորհիվ նրա թեմի հոգևորականների կրթական մակարդակը զգալիորեն բարձրանում է, միաժամանակ ծուխերում կարգավորվում կյանքը: Ձեռք բերելով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի օժանդակությունը Մշո առաջնորդարանում միասնական եկեղեցական գանձարկղ ստեղծելու հարցում, Մկրտիչ եպիսկոպոս Խրիմյանը կարողանում է կազմակերպել քահանաներին մշտական համեստ գումարներ վճարելու գործը: Նա կարողանում է նաև իր թեմի հայանքների հարուստ առևտրականներին համոզել, որ նվիրատվություններ անեն հոգուտ ամենաչքավոր ընտանիքների:

Այդ ժամանակվա Թուրքիայի ներքին քաղաքական կացությունը, ինչպես նաև Օսմանյան պետության մայրաքաղաքային և տեղական վարչական ու ռազմական իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ բավականին դժվարացնում էին Մկրտիչ եպիսկոպոսի կողմից բարենպաստ ձեռնարկումների իրագործումը Հայ Եկեղեցու օգտին: Ծանր ու դժվարին ճանապարհների մեջ դնելով՝ Աստված կարծես ուզում էր փորձության ենթարկել Հայ Եկեղեցու նվիրվածությունը իր կամքին: Մինչև այսօր էլ Հայ Եկեղեցին, համաձայն իր հին ավանդությունների և ծեսերի, հանդես է բերում իր բոլորանվեր սերն ու նվիրվածությունը Ամենաբարձրյալին:

Ղրիմի պատերազմի տարիներին (1853—1856) թուրքական իշխանությունները զանգվածային ձնշումներ են գործադրում հայերի դեմ Մուշի, Էրզրումի և Վանի նահանգներում, որոնց հայ ազգաբնակչությունը չէր թաքցնում իր համակրանքը Ռուսաստանի նկատմամբ: Թուրք պաշտոնյաների ձնշումը ծանր լուծ է հանդիսանում քաղաքային և գյուղական բնակչության համար. թուրք դատավորների, գայմագամների և կապտիեների հարստահարումներն ու կեղեքումները չափ ու սահման չունեին:

Դարավոր ձնշումն ու հալածանքը, անողոք շահագործումը, մարդկային արժանապատվության ոտնահարումը հայ գյուղացուն դարձնում են ճակատագրին հլու-հնազանդ, ամեն ինչի նկատմամբ անտարբեր մի էակ:

Սուլթան Աբդուլ-Ազիզի (1861—1876) օրոք Օսմանյան պետության կողմից հայերի հանդեպ գործադրվող ազգային և կրոնական ձնշման եղանակները ստանում են նպատակասլաց, սիստեմատիկ բնույթ: Թուրքական վարչակազմը ծայր աստիճան անողոք էր սուլթանի այլադավան հպատակների նկատմամբ, որպիսիք էին հայերը: Հայերի ճակատագիրը որոշված էր. նրանք Թուրքիայի սահմաններում պետք է դադարեին ազգ լինելուց, այլ կերպ ասած՝ նրանք դատապարտված էին բնաջնջման:

Բազմաչարչար հայ ժողովուրդը մխիթարության և առաքելական կենդանի խոսքի կարիքն ուներ: Նա արիաբար տանում էր ամեն տեսակի տառապանքներ և մահանում՝ հավատարիմ մնալով իր Փրկչին: Եվ ահա Աստված հայերին ուղարկեց մի հոգևոր առաջնորդ և ուսուցիչ հանձին Խրիմյան Հայրիկի:

Մկրտիչ եպիսկոպոսը համոզված էր, որ հայ գյուղացին ունի հոգևոր և ֆիզիկական ուժ իր զարգացման և վերածնության համար, սեփական մշակույթ, տնտեսություն և արդյունաբերություն ստեղծելու համար: Անհրաժեշտ էր միայն, որ ժողովուրդը հավատք ունենա իր ուժերի նկատմամբ: Խրիմյանի գլխավոր կենքը իր հովվական խոսքն էր՝ ջերմ, սրտառուչ, բոլորին մատչելի: «Երբ քո մասին դատում են իբրև տգետ և անընդունակ մանկան մասին,—գրում էր Խրիմյանը, —ապա ո՞վ է մեղավոր. դո՞ւ, թե քեզ կերակրողները, որոնք չար խորթ մոր նման կաթ կամ այլ կալդուրիչ սնունդ ափսուսացին տալու քեզ: Դու մեծացել ես չոր հաց և ձավար ուտելով, քո սրտի արյունը ցամաքել է, քո կենսական ուժերը թուլացել են... Հանի՛ր այդ հին շորերդ, ո՛վ ժողովուրդ, թոթափի՛ր ուսերիցդ և փոխի՛ր դրանք, ինչպես օձը իր շապիկն է փոխում»:

Մկրտիչ եպիսկոպոս Խրիմյանը կատարում էր լուսավորական և դաստիարակչական մեծ աշխատանք՝ կյանքի կոչելու համար իր ժողովրդին և ճանապարհ ցույց տալու նրան դեպի լույս: Նա մշտապես գործում էր քրիստոնեական պատգամների առաքելական ըմբռնման ոգով և մերձավորի նկատմամբ քրիստոնեական սիրով: Այդ նվիրական աշխատանքի մեջ նա ամբողջովին ներդրեց մեծ հայրենասերի և հովվապետի իր գեղեցիկ հոգին:

Մկրտիչ եպիսկոպոսը իր հոտի մասին հոգում էր ամենածանր պայմաններում, միաժամանակ զբաղվում էր ներքին եկեղեցական խնդիրներով, սակայն «Աստված ամեն ինչում գործակից է լինում բարի բաների մեջ նրանց, որոնք սիրում են նրան և որոնք կանչվեցին

նրա նախատեսումով» (Հռոմ. Ը, 28):

Հայ Եկեղեցու հոգևոր սպասին բերած իր մեծ վաստակի համար Խրիմյանին շնորհվում է արքեպիսկոպոսության պատիվ, իսկ 1869 թվականին Աստուծո կամքով նա ընտրվում է Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք: Սկսվում է նրա կյանքի և եկեղեցական գործունեության մի նոր շրջան: Սակայն Խրիմյանը Օսմանյան կայսրության մայրաքաղաքում երկար չի մնում:

Անցյալում Հայ Առաքելական Եկեղեցին ձեռք էր բերել Թուրքիայում քաղաքական մեծ կշիռ, որը հետևանք էր այն բանի, որ Օսմանցիները, վավթելով Կոստանդնուպոլիսը 15-րդ դարի կեսերին, ուղղափառ նոր հպատակներին **ռում միլլեթի** (հույն ժողովուրդ) անվան տակ ենթարկեցին Կոստանդնուպոլսի Գեննադի պատրիարքի (1453—1459, վախճանված՝ 1464 թվականին) հոգևոր և աշխարհիկ իշխանությանը, իսկ իրենց ենթակա հայերին 1466 թվականին միավորելով **էրմենի միլլեթի** (հայ ժողովուրդ) անվան տակ, հանձնեցին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի հովանավորությանը, որը, բացի հոգևոր իշխանությունից, վայելում էր նաև զգալի աշխարհիկ իշխանություն: Կոստանդնուպոլսի Աթոռը Հայ Եկեղեցու ամենահեղինակավոր Աթոռներից մեկն էր շնորհիվ իր հավատացյալների մեծ թվի և հայկական համայնքում գոյություն ունեցող համեռաշխ կյանքի: Սակայն 19-րդ դարի 30—40-ական թվականներին թուրքական իշխանությունների ճնշման հետևանքով Կոստանդնուպոլսի հայ պատրիարքները ստիպված եղան իրենց տրված իշխանությունը բաժանել 12 հոգուց բաղկացած աշխարհականների խորհրդի հետ: Աբդուլ Մեջիդ սուլթանի օրոք (1839—1861), 1860 թվականին, հաստատվում է այսպես կոչված «Ազգային սահմանադրությունը», որը մշակվել էր հայոց ազգային ժողովում: Հսմաձայն այդ սահմանադրության, Բարձրագույն Դռան սահմաններում բնակվող բոլոր հայերի հոգևոր և քաղաքական կյանքի ղեկավարումը պատկանում էր երկու ժողովների. կրոնական ժողով՝ բաղկացած 14 եպիսկոպոսներից, պատրիարքի նախագահության ներքո, և քաղաքական ժողով՝ բաղկացած 20 հոգուց, որոնք ընտրվում էին 400 հոգուց բաղկացած ներկայացուցիչների ժողովի կողմից: Սուլթան Աբդուլ-Ազիզը սահմանափակում է հոգևորականների, եպիսկոպոսների ազդեցությունը կառավարման գործում՝ ավելի շատ իրավունքներ տալով քաղաքական ժողովին, որը բաղկացած էր հարուստ հայերից: Սուլթանի կառավարությունը հույս ուներ, որ այդ ձևով կարող է թուլացնել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի ազդեցությունը բազմամարդ արևմտահայ համայնքի վրա՝ միաժամանակ նպատակ ունենալով թուլացնել Թուրքիայում ապրող հայերի շրջանում Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեղինակությունը և հոգևոր իշխանությունը (նրա Աթոռը գտնվում էր Սուրբ Էջմիածնում՝ Արևելյան Հայաստանում, որը 1828 թվականին մտել էր Ռուսաստանի կազմի մեջ):

Հենց սկզբից թուրքական կառավարությունը կասկածամտությամբ էր հետևում Մկրտիչ Խրիմյանի գործունեությանը այն պատճառով, որ վերջինս մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն Կոստանդնուպոլսի հայ պատրիարքությանը հավատարիմ հավատացյալների մոտ, այլև հայ-ունիաթների մոտ: Խրիմյանը իր քարոզներում անողոք կերպով խարազանում էր հայ հասարակության ունևոր խավի ներկայացուցիչների եսասիրությունը և անսկզբունքայնությունը. նրանք հաճախ իրենց դասային և նյութական շահերը գերիվեր էին համարում և պատրաստ էին ամեն տեսակ փոխզիջումների օսմանցիների հետ: Խրիմյանն ինքը, բառիս բուն իմաստով, իր հագուստները հանում և տալիս էր չքավորներին և թշվառներին, այցելում էր խուլ և աղքատ հայկական թաղամասերը, նյութապես օժանդակում, օգնում էր խորհուրդներով, մխիթարում էր հայ չքավոր գաղթականներին և Բերայի նավահանգստում աշխատող բեռնակիրներին: Նա մշտապես կրում էր հասարակ մի ֆարաջա, ճամփորդում էր միայն ոտքով, չէր սիրում հանդիսավորություն և պերճանք: Խրիմյանի այդպես հասարակ և մարդամոտ լինելը մերձեցնում էր նրան հայ աշխատավորներին:

Այդ տարիներին հայտնի վիպասան Ռաֆֆին հետևյալն էր գրում Խրիմյանի մասին. «Սեփականությունը նորա համար ոչինչ նշանակություն չուներ, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին... Խրիմյանը չէր ծնված բարձր կոչման համար, որ պատրիարքական Աթոռի վրա փթեցներ իր կյանքը և ձեռքը, որ սովոր էր մուլաների շնորհած քնարը հնչեցնել, պառապեցներ իր քաղաքական և կրոնական ժողովների վճիռները ստորագրելով: Խրիմյանը հոգով բանաստեղծ էր, իսկ սրտով՝ առաքյալ: Նա հիշեցնում էր մեր հինգերորդ դարու անձնուրաց աբեղաներին, որ հոգևոր վինվորության ցուպը ձեռքներին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պրտսում էին Հայաստանում...»[2]:

Հայ ժողովրդի ջերմ սերը իր Հովվապետի նկատմամբ դուր չէր գալիս թուրքական իշ-

[2] Մշակ. № 49, 1873 թվական:

խանություններին: Թուրքական հետադիմական մամուլը աշխատում էր ամեն կերպ չարամտորեն վարկաբեկել Խրիմյան Հայրիկին: 1873 թվականին նա ստիպված է լինում թողնել պատրիարքական Աթոռը Կոստանդնուպոլսում և որպես արքեպիսկոպոս հեռանալ ու գնալ Վան: «Խրիմյանը դիվանագետ չէր և այդ պատճառով չորս տարի անց թողեց պատրիարքությունը»,—գրում էր նույն 1873 թվականին Ռաֆֆին: Խրիմյանն ինքը այսպես էր ասում իր մասին. «Իմ հրաժարման պատճառը թախիծն ու հուսահատությունն է: Ես եկա գործելու համար, բայց ոչինչ չկարողացա անել»:

Շուրջ քսան տարի (1873—1892) Մկրտիչ Խրիմյանը եղել է Վանի թեմական արքեպիսկոպոս: Այդ տարիներին նա հանդես է բերում մեծ եռանդ հայ բնակչությանը հասարակական օգնություն կազմակերպելու գործում: 1876 թվականին ահավոր մի հրդեհ համարյա ամբողջովին ոչնչացնում է իր հայրենի քաղաք Վանը: Մկրտիչ արքեպիսկոպոսը այդ առթիվ գրում է բանաստեղծական մի ստեղծագործություն, որի մեջ նկարագրում է վանեցիների անելանելի վիակը և կոչ է անում աշխարհի բոլոր հայերին օգնելու քաղաքի բնակչությանը:

Ավելի ուշ, 1879 թվականին, ահավոր մի սով է տիրում Արևմտյան Հայաստանում: Խրիմյան Հայրիկը լինում է սովյալների օգնության գլխավոր կազմակերպիչը: Կարճ ժամանակում ձեռք բերած հեղինակության շնորհիվ նրան հաջողվում է զգալի մի գումար հանգանակել: Կազմակերպելով բարեգործական կոմիտեներ՝ Վանի արքեպիսկոպոսը անձամբ մեկնում է Փոքր Ասիայի խորքերը, որպեսզի աղետյալ բնակչությանը նրպաստ բաժանի: Անդուլ հոգատարություն ցուցաբերելով կարիքավորների հանդեպ՝ նա օգնում է բոլորին առանց հաշվի առնելու նրանց դավանանքը, օգնում է ինչպես քրիստոնյաներին, այնպես էլ մահմեդականներին: Նրա սրտում անջնջելի կերպով դրոշմված Լին Աստուծո հետևյալ խոսքերը. «Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես սիրում ես ինքդ քեզ» (Մարկ. ԺԲ, 31):

1877 թվականի գարնանը, այսպես կոչված «բալկանյան հարցի» պատճառով պատերազմ է սկսվում Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

Այս իրադարձություններից կես դար առաջ ռուս-պարսկական պատերազմը (1826—1828) ավարտվել էր 1828 թվականի փետրվարի 10-ին Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումով, որի համաձայն Երևանի և Նախիջևանի խանությունները մտել էին Ռուսաստանի կազմի մեջ: Այսպիսով, շահական Պարսկաստանի իշխանության տակ գտնվող Արևելյան Հայաստանը ազատագրվել էր բազմադարյան լծից: Կարելի էր ենթադրել, որ 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը նույն ձևով կվճռի նաև թուրքահայերի ճակատագիրը:

1877 թվականի ապրիլի 12-ին ռուսական Դանուբյան բանակի հետ միաժամանակ Փոքր Ասիա է ներխուժում Անդրկովկասյան բանակը գեներալ Լորիս-Մելիքովի հրամանատարության ներքո: Բայազետի, Արդահանի, Ղարսի և Էրզրումի հզոր ամրոցներն ու պարիսպներն ընկնում են:

Ռուսական զենքի հաջողությունները Արևմտյան Հայաստանում և թուրքերի պարտությունը պատճառ են դառնում, որ վերջիններս վրեժ լուծեն հայերից:

Հայտնի ծովանկարիչ Ի. Կ. Այվազովսկու եղբայրը՝ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկին, նյութական և բարոյական մեծ օժանդակություն է ցուցաբերում Թիֆլիսի, Քութայիսի գավառներում և Ռուսաստանի տեսիմաններում թուրք բաշիբոզուկների բռնություններից և վայրագություններից փախած և ապաստան գտած հայ գաղթականներին:

Այս պատերազմը ազատագրում է Բալկանյան թերակղզում ապրող քրիստոնյա ժողովուրդներին՝ բուլղարներին և սերբերին: Մկրտիչ արքեպիսկոպոսը ուշադրությամբ հետևում է ռազմական գործողությունների ընթացքին և մամուլի էջերում հանդես է գալիս ի պաշտպանություն ճնշված հայերի:

1878 թվականին Մկրտիչ արքեպիսկոպոսը և նրա քարտուղար Մինաս Չերազը մեկնում են Եվրոպա՝ իրենց հետ ունենալով ապագա ինքնավար Արևմտյան Հայաստանի կազմակերպման ծրագիրը, ինչպես նաև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի հուշագիրը, որտեղ հիմնավորված էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության անհրաժեշտությունը:

Երբ Խրիմյան արքեպիսկոպոսին հարցնում են, թե ի՞նչ լեզվով պետք է խոսի Եվրոպայում իր ժողովրդի շահերը պաշտպանելու համար, նա պատասխանում է. «Կխոսեմ մի լեզվով, որը միջազգային է և միաժամանակ տառապանքի լեզու, այսինքն՝ լաց կլինեմ»:

Ճամփորդելով Արևմտյան Եվրոպայի երկրներով՝ Մկրտիչ արքեպիսկոպոսը 1878 թվականին այցելում է մի քանի եվրոպական մայրաքաղաքներ՝ Հռոմ, Վիեննա, Փարիզ, Լոնդոն, Բեռլին, ուր եվրոպական երկրների կառավարություններին ծանոթացնում է հայ ժողովրդի ծանր վիճակին, միջնորդում և աղաչում, որ որևէ բան արվի իր դժբախտ հայրենիքի համար: Խրիմյան արքեպիսկոպոսի

միջնորդությունը և առաքելությունը անհաջողության են մատնվում իրենից անկախ պատճառներով:

Հայ Եկեղեցու մի այլ ներկայացուցիչ՝ Խորեն եպիսկոպոս Նար-Պեյը, այցելում է Պետերբուրգ, հանդիպում է ունենում Ռուսաստանի վարչապետ իշխան Գորչակովի և կոմս Իգնատիևի հետ: Վերջինս ռուսական պատվիրակության ղեկավարն էր Սան-Ստեֆանոյում Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով տեղի ունեցած բանակցությունների ժամանակ, 1878 թվականի փետրվարին: Նար-Պեյին ընդունում է Ալեքսանդր Բ ցարը:

Լինելով հեղինակավոր եկեղեցական գործիչ և հայ ժողովրդի կյանքին քաջածանոթ հոգևորական՝ Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանը Խորեն եպիսկոպոսի, Մինաս Չերազի և Ստեփանոս Փափազյանի հետ միասին նշանակվում է Բեռլինի վեհաժողովի (1878 թվականի հունիս) հայկական պատվիրակության անդամ: Վեհաժողովի նախագահն էր Գերմանական կայսրության վարչապետ Օտտո ֆոն Բիսմարկը:

Բեռլինում հայ պատվիրակներին հրավիրում են թուրքական դեսպանատուն, որտեղ նրանց առաջարկում են դադարեցնել իրենց գործունեությունը և վերադառնալ Կոստանդնուպոլիս՝ խոստանալով տեղում լուծել բոլոր հարցերը: Լավ իմանալով օսմանիցների խոստումների արժեքը՝ Խրիմյան Հայրիկը մերժում է այդ առաջարկը: «Հայկական հարցը հենց Հայաստանում է, իսկ մենք այն Բեռլինում ենք փնտրում», գրում էր ջերմ հայրենասեր, արևմտահայերի կյանքին քաջ ծանոթ Գարեգին վարդապետ Սրվանձտյանը: Շուտով հաստատվում է նրա խոսքերի ճշմարտացիությունը:

«1878 թվականին էլ, երբ կրկին [սկսեց] ռուս-տաճկական պատերազմը, և երբ դարձյալ ռուսական բանակը հասավ Պոլսի շեմքը, —գրում էր իր հոդվածներից մեկում Հովհ. Թումանյանը,—դարձյալ երևաց Անգլիան. դուրս հանեց իր նավատորմիղը և ռուսին կանգնեցրեց Սան-Ստեֆանոյում: Ապա Գերմանիայի հետ հաղթողին տարավ Բեռլին, դիպլոմատիական ջարդ տվեց նրան և միաժամանակ ջարդեց հայկական հարցը, կամ ավելի ճիշտը՝ թարսեց, 16-ը շինեց 61, ռուսաց զորքի փոխարեն հոդվածի մեջ մոցցրեց սուլթանի անունը և նրա բարեհայեցողությանը հանձնեց հայ ժողովուրդը»[3]:

1878 թվականի հուլիսի մեկին հայկական պատվիրակությունը, Մկրտիչ արքեպիսկոպոսի գլխավորությամբ, իր բողոքը ներկայացնում է վեհաժողովի նախագահ Բիսմարկին: Ահա դրա բովանդակությունը. «Հայկական պատվիրակությունը իր ափսոսանքն է հայտնում, որ հայերի օրինական և միանգամայն չափավոր պահանջները չընդունվեցին վեհաժողովի կողմից: Հայերը հասկացան, որ իրենց խաբել են և չեն ճանաչել իրենց իրավունքները»:

Ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո սուլթան Աբդուլ-Համիդ Բ-ը (1876—1909) ցրում է սահմանադրության հիման վրա գումարված մեջլիսը և երկրում մտցնում է դաժան տեռորի և բռնության ռեժիմ, որը պատմության մեջ «կուլում» անունն է կրում:

«1878 թվականին էլ մեկ կօգնեին ռուսները և էսօրվա դրությունը չէր լինի,—գրում էր Հովհ. Թումանյանը,—եթե չլիներ Անգլիան և եվրոպական երկրների կոնցերտը: Ռուսաստանը դուրս չէր բերում իր զորքերը տաճկական վիլայեթներից, մինչև սուլթանը չիրագործեր հայկական բարեկարգումների ծրագիրը, բայց նրան ստիպեցին, զորքը դուրս բերին, մեջտեղը մնացին դատարկ խոսքերն ու խոստումները, որոնց չկատարելու համար Տաճկաստանը ավելի ևս եռանդով կպավ հայն ու «հայկական հարցը» մեջտեղից վերացնելու դժոխային գործին»[4]:

19-րդ դարի 80-ական թվականներին Խրիմյան Հայրիկը Սրվանձտյանի և Փորթուգալյանի հետ միասին դառնում է Վանում և ամբողջ Վասպուրականի շրջանում ծավալված հայ ժողովրդի ազատագրական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպիչը:

«Զարթնե՛ք, Հայկի որդիներ, զարթնե՛ք,— գրում էր նա այդ տարիներին: —Ո՞վ է որոշել, որ հայ ժողովուրդը պիտի հավիտենապես տառապի դժոխքի և տգիտության բանտում: Մի՛ ողբացեք, մի՛ հուսահատվեք, սրբեցե՛ք ձեր արտասուքը: Ամրապնդենք մեր բազուկները և մեր ոտքերը: Սգացողները լաց եղան և գնացին: Նրանք ծեր էին: Մենք կգնանք նոր ճանապարհով»:

«Նա հայտնվում էր հայությանը որպես Վասպուրականի մի համեստ վանքի համեստ վանահայր... բայց անասելի հանդուգն, որպես գաղափարի համար մարտնչող, որպես մոլեռանդ պաշտող մարդկային միտքը...», գրում էր Գրիգոր Արծրունին: «Երջանիկ մարդ. նա անկեղծ կերպով հավատում էր մտքի փրկարար, անհաղթելի ազդեցությանը, անպայման հավատում էր խոսքի ուժին... Քարոզ խոսելիս նա հավատում է, անկեղծ

[3] **Հովհ. Թումանյան**, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951 թ., էջ 232:

[4] **Հովհ. Թումանյան**, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951 թ., էջ 209—210:

կերպով հավատում է, թե իր խոսքն ազդում է, թե իր խոսքը կարող է հեղափոխել հայությանը, որովհետև նա ինքը հավատում է խոսքի անհաղթելի ուժին, հավատում է ճըշմարտությանը, հավատում է, թե արդարությունը վերջ ի վերջո հաղթող կհանդիսանա:

Միայն այդ տեսակ **համոզվածները** կարող են ժողովրդական մարդիկ լինել. դրա մեջն է Խրիմյանի ժողովրդական մարդ լինելու գաղտնիքը:

Խրիմյանը օպտիմիստ է, լավատես է այդ բառի բուն քրիստոնեական մտքով. նրա համար չկան վատ մարդիկ աշխարհիս երեսին, այլ կան միայն մոլորված մարդիկ:

...Նա համառ է իր մտքերի, իր գաղափարների, իր դավանած սկզբունքների մեջ: Նույն տոկուն, անհաղթելի համառությամբ շարունակում է նա մարտնչել ... որևէ անարդար պահանջների դեմ. մի քարյա սյուն, որին ո՛չ հողմը, ո՛չ էլ մրրիկը չեն կարող շարժել իր ամուր պատվանդանից»[5]:

Մկրտիչ արքեպիսկոպոսը ավելի ու ավելի մեծ հարգանք է վայելում Կ. Պոլսի հայոց պատրիարքության բարձրաստիճան հոգևորականների շրջանում և 1884 թվականին ընտրվում է կրոնական ժողովի նախագահ Կոստանդնուպոլսում: Սակայն արդեն 1891 թվականին թուրքական կառավարության պահանջով նա ստիպված է լինում մեկնել պատվավոր աքսոր Երուսաղեմի հայոց պատրիարքության մոտ: Երուսաղեմում Մըկըրտիչ արքեպիսկոպոսը բնակվում է հայոց վանքում, որը գտնվում էր հայկական թաղամասում, քաղաքի հարավային կողմը: Նա հաճախ պատարագում էր Սուրբ Հակոբ առաքյալի անունը կրող հայկական տաճարում:

1892 թվականին Աստված Մկրտիչ արքեպիսկոպոսին կոչում է մի նոր սխրանքի՝ որպես առաջին սպասավոր ծառայելու ի փառս Հայ Առաքելական Եկեղեցու: Ամենայն Հայոց երանաշնորհ Հայրապետ Մակար Թ Թեղուտցի (վախճանված 1891 թվականին) կաթողիկոսի մահվանից հետո Մկըրտիչ արքեպիսկոպոսը միաձայն ընտրվում է կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորչի հայրապետական գահին:

Չնայած Օսմանյան Բարձրագույն Դռան ուղղակի դիմադրությանը, ռուսական կառավարությունը և Սուրբ Սինոդը հաստատում են Խրիմյանի ընտրությունը որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս (1893 թվականի հունիսին այդ առթիվ հանձնվում է Ալեքսանդր Գ ցարի հրովարտակը, որով հաստատվում է նրա ընտրությունը):

1894 թվականին Ալեքսանդր Ծատուրյանը հետևյալն է գրում «Հանդես» ամսագրի էջերում. «...Եվ ահա այդ խնկելի անձն այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոս է:

«Վասպուրականի Արծիվը», որ հին Սիոնի բարձունքից միայն գողտրիկ երազներում էր թռչում դեպի Մայր-Երասխի ափունքը, դեպի նվիրական Արարատը, այսօր վերջապես նա արթուն աչքով, լույս ցերեկով պացավ դեպի նոր Սիոն, դեպի իր կարոտած Մասիսը: Հզոր թևերով նա ճեղքեց ամպերը, անցավ ծով ու ցամաք, լեռներ ու դաշտեր—և ահա հեռադետ ու լուսահայաց ճախրում է Էջմիածնի սրբավայրերում, սավառնում է Լուսավորչաշեն Տաճարի խաչապսակ գմբեթի շուրջը:

Մի սիրտ, որ բազում տարիներ տանջվում, տառապում էր ազգի ցավերով, մի սիրտ, որի խորքերում ազգը կանգնել էր իր դարևոր հայրենասիրության, իր դարևոր իղձերի նվիրական սեղանը—այդ մեծ սիրտն այսօր ուժգին տրոփում է Լուսավորչի լուսապայծ Գահի վրա»[6]:

19-րդ դարի վերջին տասնամյակը նշանավորվում է մի նոր ողբերգությամբ, որը տեղի է ունենում Փոքր Ասիայում: Սուլթան Աբդուլ-Համիդը սկսում է սիստեմատիկ կերպով ոչնչացնել հայ ազգաբնակչությանը կանոնավոր բանակի և նորաստեղծ հեծելազորի՝ համիդիեի օգնությամբ: Այդ հեծելազորն ստեղծվել էր 1891 թվականին:

1894—1896 թվականներին օսմանյան կառավարությունը Թուրքիայի հայաբնակ նահանգներում և գավառներում, ինչպես նաև Կոստանդնուպոլսում կազմակերպում է հայկական դաժան կոտորածներ:

1894 թվականի օգոստոսին թուրքական զորքերը Զեքի փաշայի հրամանատարությամբ մոխրակույտի են վերածում Սասունը՝ ոչնչացնելով ավելի քան քառասուն գյուղ:

Այնուհետև հերթը գալիս է Ամենայն Հայոց Հայրապետ Խրիմյան Հայրիկի ծննդավայր Վան քաղաքին:

Վանի ռուսական հյուպատոս Ի. Ս. Մակսկին իր «Վանի նահանգը» հետազոտության մեջ գրում է, որ միայն 1895 թվականին այդ նահանգում հայկական բնակչության թիվը 15—20 տոկոսով պակասել էր: Որոշ գյուղերում բնակչության կեսը բնաջնջվել էր, իսկ մյուս կեսը փախուստի էր դիմել:

1896 թվականի ամռանը Վանը և Վասպուրականը ենթարկվում են ընդհանուր կողոպուտի և կոտորածի: Այդ մասին ֆրանսիացի հայտնի գիտնական Էդուարդ Տրիոն նշում

[5] Մշակ, № 23, 1893 թվական:

[6] Ալ. Ծատուրյան, Հայրիկը-կաթողիկոս, Հանդես գրականական և պատմական, հինգերորդ գիրք, էջ II—III, Մոսկվա, 1894:

էր. «1896 թվականի հունիսի 15-ից 25-ը Վանը և նրա շրջակա հարթավայրի գյուղերը հրդեհվել էին... Բոլոր եկեղեցիները, վանքերը և հատկապես հայտնի Վարագա վանքը կողոպտվել և ավերվել էին»[7]:

1890-ական թվականների կոտորածների լոռ են դառնում հարյուր հազարավոր հայեր: Շուրջ 100.000 մարդ ապաստան են գտնում Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում: Հարյուրավոր գյուղեր թալանվել, հրի և սրի էին մատնվել, սակայն արյունահեղ սպանդի վերջը չէր երևում:

Արևելյան Հայաստանի քրիստոնյա բնակչության նկատմամբ Թուրքիայի կատարած չարագործությունների լուրը Խրիմյան Հայրիկին գցում է խոր հուսահատության մեջ: Նա կոնդակով կարգադրում է հանուն հավատքի զոհված հայ նահատակների համար բոլոր հայկական եկեղեցիներում պատարագի ժամանակ հոգեհանգիստ կատարել:

Հայտնի գրող Ղազարոս Աղայանը (1840—1911) հայ ժողովրդի համար ողբերգական այդ օրերին գրում էր. «Ես իմ մեջ կրում էի հայրենիքի ջերմ սերը, բայց մի հանգամանք պատճառ դարձավ, որ այդ սերը բոցավառվի: Մի երկնային կայծով Խրիմյան Հայրիկը բոցավառեց այդ սերը իմ հոգում: Հայրիկի քարոզը առաջին անգամ լսեցի Թիֆլիսի Սուրբ Գևորգ եկեղեցում»[8]:

Ավելի ուշ, հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը խոր ողբերգությամբ և դառն կրքով լի իր «Երկու հայրիկ» բանաստեղծական նովելում նկարագրում է Խրիմյան Հայրիկին ժողովրդական վշտի այդ օրերին: Նովելը գրված է 1907 թվականին և նվիրված է Հայրիկի հիշատակին: Թումանյանը գրել է նաև «Հայոց վիշտը» իր հայտնի բանաստեղծությունը 1915 թվականի Եղեռնի տարում, երբ Փոքր Ասիայում նահատակվեցին մեկ և կես միլիոն հայեր: «Հայոց վիշտը» բանաստեղծությունը արտացոլում է բանաստեղծի թախծալի մտորումները իր երկրի պատմության վերաբերյալ: Սա հայ ժողովրդին նվիրված բանաստեղծական մի ռեքվիեմ է, որի մեջ հեղինակը ողբում է իր ժողովրդի բազմադարյան ահավոր ճակատագիրը:

«Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին:

Մերթ կայրացկոտ ծառս է լինում
Մինչև երկինք կապուտակ,
Ու մերթ հոգնած սուզվում, իջնում
Դեպի խորքերն անհատակ:

Ոչ հատակն է գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին»:

Թուրքական բռնակալների դեմ բողոքի ալիքը և տառապյալ ժողովրդի նկատմամբ կարեկցանքը համակել էին ինչպես ռուս հասարակայնության, այնպես էլ արևմտաեվրոպական երկրների առաջադեմ լայն շրջանակները:

1896 թվականի սեպտեմբերի 8-ին ականավոր նկարիչ Ի. Կ. Այվազովսկին Թեոդոսիայից Խրիմյան Հայրիկին ուղարկել էր մի նամակ, որի մեջ կայրույթով էր խոսում Թուրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածների մասին՝ նշելով, որ ինքը նպատակ ունի այդ թեմայով մի նկար ստեղծել: Մեծ նկարիչն ստեղծում է մի շարք կտավներ՝ նվիրված 1894—1895 թթ. հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին: Այդ նկարների էսքիզները Այվազովսկին ուղարկել էր Պետերբուրգ, որպեսզի հրատարակվեն «Եղբայրական օգնություն աղետյալ հայերին» անունը կրող գրական գեղարվեստական ժողովածուի մեջ:

Չնայած ծանր փորձություններին՝ հայ ժողովուրդը գլուխը չխոնարհեց: Արդեն 1894 թվականի օգոստոսին, երբ թուրքական կորքերը ներխուժում են Սասուն, հայերը հերոսական մարտեր են մղում թվով իրենցից տասնապատիկ գերազանց թշնամու դեմ՝ վերականգնելով քաջարի սասունցիների վաղեմի փառքը:

1895 թվականի աշնանը, ի պատասխան Օսմանյան պետության կամայականությունների. ապստամբություն է բռնկվում նախկին Կիլիկիայի հայկական թագավորության (ԺԱ—ԺԴ դդ.) սահմաններում գտնվող լեռնային Զեյթուն քաղաքում: Ապստամբության ազդանշանն է դառնում տեղի եկեղեցու զանգակների ղողանջը: Ամբողջ Զեյթունը՝ ծերեր, երիտասարդներ, տղամարդիկ, կանայք, պատանիներ ոտքի են կանգնում թուրքերի դեմ պայքարելու համար: Ամեն մի զեյթունցի դառնում է մարտիկ: Զեյթունի հայ հոգևորականությունը, խաչը ձեռքին, գլխավորում է զինվորական ջոկատները: Զեյթունցիները արիաբար կռվում են հանուն գոյության իրավունքի՝ ետ մղելով Մուստաֆա Ռեմզի փաշայի թուրքական պատժիչ բանակի կատաղի գրոհները: Իրենց այս սխրագործությամբ

---

[7] Էդ. Տրիո, Արևելյան պրոբլեմը և հայկական հարցը. Սանկտ Պետերբուրգ, 1913 թ., էջ 397:

[8] Ղ. Աղայան, Իմ կյանքի գլխավոր դեպքերը, Թիֆլիս, 1894 թ.:

նրանք նախօրինակ հանդիսացան Սարդարապատի հայ հերոսների փառքի:

Զեյթունի ապստամբության տարում, մարտ ամսին, Հայ Եկեղեցու Հովվապետը պաշտոնական այցով մեկնում է Պետերբուրգ՝ հակառակ իր ծերունական հասակին և հակառակ ճանապարհի երկարությանը: Մկրտիչ Խրիմյանի այցի գլխավոր նպատակն էր միջնորդել ռուսական կառավարության մոտ՝ պաշտպանելու Արևմտյան Հայաստանի քրիստոնյա բնակչությանը: Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը պատմում է հայ ժողովրդի գլխին եկած աղետները, Ռուսաստանի օգնությամբ ապատություն ձեռք բերելու նրանց վաղեմի երազանքի մասին: Սակայն հայ ժողովրդի երազանքները չեն իրականանում:

Ռուսաստանի մայրաքաղաքում Խրիմյանին ընդունում են մեծ պատիվներով, նրան շնորհում են ամենաբարձր պարգևներից մեկը՝ իշխան Ալեքսանդր Նևսկու շքանշանը: Սուրբ Սինոդը Ամենայն Հայոց Հայրապետին նվիրում է ադամանդե խաչ վեղարի վրա կրելու համար:

Համայն հայության Հայրիկ Մկրտիչ Խրիմյանը իր երկար և դժվարին կյանքի տարիներին անվեհեր կերպով ծառայեց իր Եկեղեցուն և հարազատ ժողովրդին: Նա եղավ իր նախորդների՝ Ներսես Ե Աշտարակեցու (վախճանված 1857 թվականին) և Գևորգ Դ-ի (վախճանված 1882 թվականին) արժանի հաջորդը: Տասնհինգ տարիների իր իմաստուն ղեկավարության շրջանում Մկրտիչ Խրիմյանը իր ազնիվ հոգու բարձր արժանիքները ի սպաս դրեց Հայ Առաքելական Եկեղեցու բարօրությանն ու բարգավաճմանը:

Խրիմյանը հատկապես հոգում էր ժողովրդի կրթության մասին: Նա մշտապես պնդում էր, որ եկեղեցիների և վանքերի եկամուտների զգալի մասն օգտագործվի նոր դպրոցների ստեղծման համար, միաժամանակ իր աջակցությունն էր բերում ուսումնական ծրագրերի ընդլայնմանը և հայկական դպրոցների հոգևոր մակարդակի բարձրացմանը:

Իր հրապարակախոսական աշխատություններից բացի, Մկրտիչ Խրիմյանը հեղինակել է մի քանի աստվածաբանական, ինչպես նաև բանաստեղծական և մանկավարժական երկեր: Հատկապես հայտնի են նրա «Հրավիրակ Արարատյան» և «Հրավիրակ Երկրին Ավետյաց» պոեմները՝ գրված Հայաստանում և Պաղեստինում իր կատարած ճանապարհորդությունների անմիջական ազդեցության տակ, «Հայգույժ» (1877 թ.), «Վանգույժ» (1878 թ.) պոեմները, որտեղ նկարագրված են հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները, «Սիրաք և Սամուել» աստվածաբանական աշխատությունը, ինչպես նաև «Դրախտի ընտանիք» խրատա-բարոյական գործը, որի մեջ շարադրված են Հայ Եկեղեցու Հովվապետի հայացքները ընտանեկան կյանքի և նրա հիմքերի մասին:

Նրա մատենագրական վաստակի մեջ առանձին արժեք են ներկայացնում մի շարք պատմվածքներ, ակնարկներ և հայրենի երկրի նկատմամբ մեծ սիրով տոգորված նրա «Պապիկ և թոռնիկ» վեպը, որտեղ պատկերված է ֆիզիկական ծանր աշխատանք կատարող հայ գյուղացու կերպարը:

Մինչև իր կյանքի վերջին օրերը կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը մեծ հեղինակություն էր վայելում համայն աշխարհի հայության մեջ: Նա երազում էր իր ժողովրդի միության մասին, ամեն կերպ օգնում էր, որ գաղթականները վերադառնան Արևելյան Հայաստան, որպեսզի «բոլոր կողմերից հայ պանդուխտները իրենց երեսը դարձնեն դեպի իրենց հրաշալի հայրենիքը»:

1907 թվականի նոյեմբերի սգո օրերին, երբ թաղում էին Հայ Եկեղեցու մեծ Հովվապետին, Ալեքսանդր Քալանթարը գրում էր իր օրագրում. «...Հանգուցյալի մարմինը դեպի իր վերջին հանգրվանը հուղարկավորեցին Գերաշնորհ Տ. Մաթևոս, Տ. Սարգիս, Տ. Գևորգ և Տ. Գարեգին սրբազանները՝ բազմաթիվ այլ հոգևորականների ընկերակցությամբ: Սգավոր, հեկեկացող հայկակների և հայկուհիների մի հոծ բազմություն լցվել էր Էջմիածնի վանքի շրջափակում...

Անդրշիրիմյան աշխարհ էին հուղարկավորում շատ սիրելի և իմաստուն Հայրիկին... Սուրբ պատարագի և հոգեհանգստյան արարողությունից հետո, հոգևորականները Իջման սեղանից դագաղը դուրս հանեցին դեպի Մայր տաճարի շրջափակը և սգավոր ժողովրդի բազմության գլխավերևում, ձեռքերի վրա բարձրացրած, այն պտտեցնելով տաճարի շուրջը՝ տարան դեպի հանգուցյալի վերջին հանգրվանը:

Հրաշալի, կարծես ժպտացող աշնանային այդ օրը, որպիսին մենք՝ հարավային բարեբնպաստ կլիմայի տակ ապրողներս վայելում ենք, երևութական մի հակադրություն էր կազմում միայն թաղման թափորի մասնակիցների հանդիսավոր—տխուր տրամադրության հետ: Երկինքը պարզ էր, արևը պայծառ շողում էր, օդը մաքուր էր և թափանցիկ, իսկ շրջապատող բնությունը շնչում էր ինչ-որ մի ուրախությամբ, ինչ-որ մի խնդությամբ... Սակայն բնության այդ հրճվանքը գարնանային կյանքի վարթոնք չէր: Դա դեպի հավիտենականության գիրկը նահանջող տարվա վերջին լավ, սաք օրերից մեկն էր... Նման բերկ-

րանքով չի՞ ուրախանում միթե խաղաղորեն հավիտենականության գիրկն անցնող բարեպաշտ մարդու արդար հոգին:

Երթա՛ս խաղաղությամբ, Քրիստոսի այգու բարի, մեծագործ մշակ»[9]:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի 1971 թ. Բ համարում տպագրվել է Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ի «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» հոդվածը: Հոդվածում ընդգծված է, որ Մկրտիչ Կաթողիկոսի մասին նախ և առաջ պետք է գրել և խոսել իբրև մանկավարժի: Իր ժողովրդի պատմության մեջ նա հայտնի է որպես հայ մանկավարժության հայրը:

«Գրելու համար Հայրիկի մասին, պետք է գրիչը թաթախել հայ ժողովրդի հույզերու և երազանքներու ավազանին մեջ, վի Տ. Տ. Մկրտիչ Խրիմյան Հայրապետը, համայն հայության գիտակցության մեջ, շատոնց ի վեր փառավորված է անթառամ լուսապսակով՝ իբրև անձնդիր քաջ Հովվապետ, իբրև դաստիարակ հայ շինականի, իբրև ռահվիրա հայրենյաց ազատության: Անոր ոգին կապվառնի այսօր ալ հայոց աշխարհի երկնակամարին ներքև, հավատք և հույս ներշնչելով մեր ժողովուրդին, լուսավոր նոր հորիզոններ բանալով դեպի ապագան»[10]:

Մկրտիչ Խրիմյան Կաթողիկոսի, մեծագործ մարդու, հանուն քրիստոնեական մեծ պատգամների մաքառող հոգևորականի պայծառ անունը, նրա փառապանծ կյանքը և ակնիվ գործերը ոսկյա տառերով են գրված Հայ Առաքելական Եկեղեցու բազմադարյան պատմության մեջ:

Մկրտիչ Խրիմյանի հովվապետական երկարամյա ծառայությունը ի բարօրություն իր հարազատ ժողովրդի և Հայ Առաքելական Եկեղեցու եղել է բազմակողմանի, արդյունավետ և պսակվել է փայլուն հաջողությամբ: Հեռատես և իմաստուն Հովվապետը իր գործունեությամբ նախապատրաստեց Հայաստանի մշակութային և հոգևոր վերածնությունը, սկիզբ դրեց աշխարհով մեկ ցրված հայերի ազգահավաքման գործին, կորացրեց նրա ձգտումը դեպի Հայաստանյայց Եկեղեցին և համախմբումը նրա շուրջը: Այն գործը, որին իր ամբողջ կյանքի ընթացքում ծառայել է Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, շարունակեցին Քրիստոսի այգու մյուս մշակները, ինչպիսիք էին՝ Մաթևոս Բ Իզմիրլյան (1908—1910), Գևորգ Ե Սուրենյանց (1911—1930) և անմոռանալի Գևորգ Զ Չեորեքչյան (1945—1954) Ամենայն Հայոց Հայրապետները:

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին նվիրված հանդիսավոր տոնակատարության օրերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն 1978 թվականի հոկտեմբերի 3-ին արտասանած իր ճառում ասում էր.

«Հայ ժողովուրդը, որ իր քաջ որդվոց ծով արյան ճանապարհով հասել է մեր օրերի իր ազգային վերածնունդի լուսաբացին, իր պետականության կազմավորման, միշտ ռուս ժողովրդի եղբայրական օգնությամբ, այսօր բարձել է արդեն իր գերագույն շահերին գիտակից ազգություն, իր սեփական ուժերի վրա հավատք ունեցող ազգություն, իր ապագայի նկատմամբ լավատեսությամբ համակված ազգություն: Նաև մի ազգություն, որ գիտե հարգել ու փառավորել հիշատակը իր վավակների հերոսական ճիգերի և զոհաբերումների, որոնք արյամբ ներկեցին հայոց ազատագրական պայքարի ճանապարհը: Սրբազան պայքարի մի ճանապարհ, որի վրա իրենց արյունը թափեցին նաև մեր ռուս եղբայրները... Անցյալի փորձառությամբ լուսավորված՝ պարտավոր ենք հառաջ ընթանալ դեպի մեր ապագան, մեր ոտքերի տակ մեր մայր հողը ունենալով որպես ամուր պատվանդան»:

Մի այլ ելույթում նա նշում էր. «Հայ ժողովուրդը այսօր ազգություն է իր արդի պետականությամբ և հայրենաբնակ ժողովրդով, սովետական եղբայրական հանրապետությունների մեծ Միության մեջ»:

Ա. ՈՒՄՆՈՎ

[9] Ալ. Քալանթար, Իմ հուշերից, Թիֆլիս, 1911 թ.:
[10] «Էջմիածին», 1971 թ., № 2, էջ 3: